23971

ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆ
ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. ԺԴԱՆՈՎ

ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆՆԵՐՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԻՍԿԱԿԱՆ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐՆ ԵՆ

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ • ԵԵՐԵՎԱՆ

331.87
Ժ-39

15 JAN 2010

331.87
Ժ-39

Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք

ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆ
ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. ԺԴԱՆՈՎ

ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆՆԵՐՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԻՍԿԱԿԱՆ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐՆ ԵՆ

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ • ԵՐԵՎԱՆ

25.04.2013

Թարգմ. Մ. Զ"քարյան, խմբ. Հ. Գասպարյան
Սրբագրիչ Վ. Ջիլեզյան

Գլավլիտի լիազոր C—93, հրատ. № 338,
պատվեր № 415 տիրաժ 10.000, ինդեքս Π—80

Հայկուսհրատի տպարան, Ալլահվերդյան, № 27

А. А. ЖДАНОВ

Стахановцы настоящие большевики производства

Армпартиздат, Эривань

Ընկերնե՛ր, թույլ տվեք մեր կուսակցության Լենինգրադի մարզային և քաղաքային կոմիտեների անունից, Լենինի քաղաքի բոլշևիկների անունից ջերմագին վողջույն հաղորդել ստախանովական բանվորների ու բանվորուհիների խորհրդակցությունը: (Ծափահարություն: «Կեցցե ընկ. Ժդանովը», «ուռա», բացականչություններ: Ծափահարություն):

Ընկերնե՛ր, վորքան ավելի ուշադրությամբ ես դիտում և խորամուխ ես լինում մեր պայքարի ու աշխատանքի արդյունքների մեջ, այնքան ավելի նշանակելի ձևով են պատկերանում վերջին տարիների ու առանձնապես 1935 թվի հաջողությունները: Այն մեծագույն հաջողությունների հիման վրա, վոր մենք տարել ենք նոր տեխնիկայի կառուցման ճակատում, կոլտնտեսությունների շինարարության ճակատում, յերկրի պաշտպանության շինարարության ճակատում, 1935 թիվը, ինչպես մյուս տարիներից և վոչ մեկը, բացառիկ արդյունքներ բերեց նոր մարդկանց աճման գործում, նոր կադրերի աճման գործում: Ցեվ յերբ ուշադրությամբ դիտում ես կադրերի այս նոր աճմանը, ապա մեր յերկրի բոլոր լավագույն մարդկանց հետ միասին, մեր հայրենիքի աշխատավորների հետ միասին ղղում ես այս հոյակապ, բախտավոր ժամանակներում

ապրելու և աշխատելու հրճվանքը։ Զգում ես, որ հատկապես 1935 թիվը, մեր յերկրի հատկապես ինդուստրացման քաղաքականությունը, սոցիալիզմի հաղթությունը մեր յերկրում հսկայական պտուղներ են տալիս՝ նոր կադրերի աճման կերպարանքով, նոր մարդկանց աճման կերպարանքով։ Այս աճումը կարելի յե շոշափել ամեն որ, որովհետև ամեն մի որ բերում է նորանոր ռեկորդներ ու նվաճումներ. պարաշյուտիստները հասել են համաշխարհային ռեկորդների, ստրատոնավտները բարձրացել են հեռու՝ յերկնքի մոտ, հեծանվորդները կատարել են Սվերդլովսկ—Մոսկվա վազքը, բայդարավարներն Իրկուտսկից յեկել են Մոսկվա։

Հաղթանակած սոցիալիզմի հերոիկան ձուլվել և դարձել է համաժողովրդական հզոր շարժում, ստախանովյան շարժում։ Ընկեր Ստալինը հարվածային կոլտնտեսականների համամիութենական առաջին խորհրդակցության մեջ ասաց, որ ժողովուրդների պատմությունը քիչ հեղափոխություններ չգիտե և մարդկային պատմության զանազան դարաշրջաններում տեղի ունեցած այս հեղափոխությունները մեր հեղափոխությունից տարբերվում են նրանով, որ նրանք բոլորն ել յեղել են միակողմանի, որ այս հեղափոխությունների պտուղներից ոգտվել են վոչ թե աշխատավորները, վոչ թե կեղեքվածները, վոչ թե ստրուկները, որոնք ապստամբություններ են բարձրացրել իրենց կեղեքիչների դեմ, այլ շահագործող դասակարգերը, կեղեքիչները։ Միայն մեր պրոլետարական Մեծ հեղափոխությունը, որ մեկընդմիշտ ջախջախեց կապիտալի ստրկության շղթաները, առմիշտ վոչնչացրեց շահագործումը,— միայն մեր պրոլետարական Մեծ հեղափոխությունն է հանդիսանում այնպիսի հեղափոխություն, որի պտուղներից ոգտվում են մեր յերկրի բոլոր աշխատավորները։ (Ծափահարություն)։

Ահա թե վորտեղից է ծագում նոր կադրերի բուռն աճումը, ահավասիկ այն հսկայական խանդավառության, հրճվական հրճվանքի աղբյուրը, որով ազատագրված աշխատանքը հաղթականորեն քայլում է մեր յերկրում հաղթանակից հաղթանակ։ Այս մեծադույն հաղթանակների, մարդկանց այս հսկայական աճման մարմնավորումն և հանդիսանում ստախանովյան շարժումը։ Ամբողջ յերկրում արդեն լայնորեն ծավալված այս շարժումը ցույց տվեց, թե ինչ հսկայական հնարավորություններ են թաղնված մեր խորհրդային սիստեմի մեջ, մեր մարդկանց մեջ, ցույց տվեց, որ մեր հասարակակարգը, սոցիալիզմի հասարակակարգը արթնացնում է միլիոնավոր աշխատավորների ստեղծագործությունը, մինչդեռ կապիտալիզմի հասարակակարգը, կեղեքման ու ստրկության հասարակակարգը ճնշում, խեղդում է ժողովրդական տաղանդները։ Կապիտալիզմի ժամանակ միայն յեղակի մարդիկ կարող են «մարդկանց շարքն» ընկնել։ Միայն խորհրդային հասարակակարգը, միայն սոցիալիստական հասարակակարգն է կոչ անում դեպի կյանք, ի հայտ է բերում բոլոր մարդկանց տաղանդները։ Սրա ցայտուն հաստատումն են այստեղ, դահլիճում նստած և նրա սահմաններից այն կողմ մեր խորհրդային մեծ ու անընդդիմելի յերկրում գտնվող մարդիկ։

Ստախանովի, Բուսիգինի, Կրիվոնոսի, Գրոնինի, Սմետանինի և արտադրության մյուս հեղափոխականների ու բոլշևիկների շարժումն ամենաջերմ աջակցություն գտավ, ամենալայն արձագանք առաջացրեց Լենինգրադի Ֆաբրիկներում ու գործարաններում։ Այս շարժումն ամենակարճ ժամանակամիջոցում մեր Ֆաբրիկներում ու գործարաններում առաջ քաշեց մի շարք անուններ, որոնցով հպարտանում և մեր քաղաքը, որոնցով իրավամբ կարող է հպարտանալ մեր ամբողջ յերկիրը։

Սրանք են՝ Սմետանինը, «Ելեքտրոսիլայի» դարբին Մարտեխովը, Նետունայեվը, Անդրեյեվը, նավաշինարանի բանվորուհի Սմիրնովան, Գրոդկովան, Ժելեզնյակովան, Կոմիսարովան, Ողինը, Ավդեյենկոն և ուրիշ հարյուրավորները: Լենինի քաղաքի բանվորներն ու աշխատավորները ԽՍՀՄ պրոլետարական Մեծ հեղափոխության տարեդարձի տոնակատարության որը հպարտությամբ ելին կրում այս լավագույն մարդկանց պատկերներն իրենց դրոշների ու պլակատների վրա:

Ցեռ կբերեմ միքանի թվեր, վորոնք ցույց են տալիս ստախանովյան շարժման թափը Լենինգրադում: Այսպես, որինակ, առ 10 հոկտեմբերի 23 ձեռնարկության մեջ կար 484 ստախանովական: Ինչպես տեսնում եք, շատ չէ: Բայց արդեն առ 15 հոկտեմբերի այս նույն ձեռնարկություններում ստախանովյան շարժման մեջ մտած և նորմաները նշանակելի չափով դերակատարած բանվորների թիվը կազմում եր 14·300: Սա, ընկերներ, ցուցանիշն է այն բանի, թե ստախանովյան շարժումն ինչպես արագ և ինչպես լայնորեն է սկսել ընդգրկել գործարան գործարանի հետևից, ֆաբրիկ ֆաբրիկի հետևից: Ներկայումս Լենինգրադում չկա արդյունաբերության մի ճյուղ, չկա մի գործարան, չկա մի ֆաբրիկ, վորտեղ ստախանովյան-բուսիդինյան մեթոդները հաղթանակ հաղթանակի հետևից չտանեն: Ցեվ այն հանգամանքը, վոր ստախանովյան շարժումը կարճ ժամանակամիջոցում, ամենաչնչին բացառությամբ, ընդգրկել է Լենինգրադի համարյա բոլոր ֆաբրիկներն ու գործարանները, ցույց է տալիս այս շարժման ուժն ու խորությունը, ցույց է տալիս, վոր ստախանովյան-բուսիդինյան մեթոդն ամբողջովին արդարացրել է իրեն: (Ծափահարություն):

Ստախանովականներն արտադրության խսկական բոլշևիկներն են: Այնպես, ինչպես մեր կուսակցությունը հաստատակամ և ուժեղ է իր ճիշտ քաղաքականությամբ, ուժեղ է իր ղեկավարությամբ, ուժեղ է իր կամքով ու համառությամբ, դժվարությունների հանդեպ չնահանջելու, այլ նրանց հաղթահարելու իր կարողությամբ,—այնպես ել ստախանովականներն այնպիսի մարդիկ են, վորոնք վոչնչից չվախենալով, ջարդում են անշարժությունը, շուռ են տալիս այսպես կոչված «տեխնիկապես հիմնավորված» նորմաները, դերազանցում են յեռապատիկ կարողություններ և, տեխնիկային տիրապետելով, ոգտագործելով գործիմացությունը, ուսումնասիրելով գործը, աղնվորեն վերաբերվելով նրան, հարված են հասցնում պահպանողականությանը, հարված են հասցնում անշարժությանը, հարված են հասցնում բոլոր հին մեթոդներին: Ցեվ այս տեսակետից ստախանովականները մեր կուսակցության լավագույն բարեկամներն են և ոգնականները: Կուսակցական և վոչ կուսակցական բոլշևիկ-ստախանովականները մեր կուսակցության լավագույն բարեկամներն ու ոգնականներն են, կուսակցության կենտրոնական կոմիտեի ու ընկեր Ստալինի լավագույն բարեկամներն ու ոգնականները: Ստախանովականները, բուսիդինականներն ու սմետանականները մեծ գործ են անում՝ տիրապետելով տեխնիկային, ոգնելով կուսակցությանը տեխնիկայից քամելու այն ամենը, ինչ նա կարող է տալ: (Ծափահարություն):

Մեր միքանի ձեռնարկություններում ստախանովյան շարժումը դիմադրության հանդիպեց մեր կուսակցական, տնտեսական ու արհմիութենական կազմակերպությունների ոպորտունիստական պահպանողական տարրերի և բանվորների հետամնաց մասի կողմից: Խոսակցություններ սկսեցին, թե իբր, յեթե մենք զարգացնենք ստախանովյան շարժումը, ապա պլանը կմեծացնեն, վոր հարկ կլինի այլ կերպ կազմակերպել մատակարարումը և վոր առհասարակ շատ ու շատ դժվարություններ կլինի: Այս բոլորն արվում եր

նրա համար, վորպեսզի մի կերպ խուսափեն ստախանովյան շարժումը կազմակերպելուց: Բայց մենք խիստ հարվածեցինք այս տրամադրություններին, շշպրեցինք, կարգի հրավիրեցինք ստախանովյան շարժման սաբոտաժավորներին, նրանց հասկացնել տվինք, վոր կուսակցությունը վոչ մի բանի առաջ կանգ չի առնի ստախանովյան շարժման հաղթական ուղուց սրբելու նրա բոլոր դիմադրողներին:

Օրինակի համար վերցնենք աշխատանքի միքանի մեթոդներ տարիֆային քաղաքականության բնագավառից: Տարիֆային պրակտիկան, աշխատանքի նորմավորման պրակտիկան և աշխատավարձի կազմակերպումը դեռևս համապատասխան չի դարձված ստախանովյան շարժման խնդիրների ու կազմակերպման հետ: Մի՞թե փաստ չէ, վոր մեր մի ամբողջ շարք ձեռնարկություններում նորմայի ամեն մի գերակատարման հետևում եր նորմայի անհապաղ վերանայումն ու գնահատումների իջեցումը: Մի՞թե փաստ չէ, վոր նորմավորողներն ու տարիֆիկատորները հաճախ գործը վարում եյին և վարում են այնպես, վոր նորմաներն անհապաղ վերանայելու և գնահատումներն իջեցնելու միջոցով կասեցնեն առաջավոր բանվորների թափը բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը:

Այսպիսի հավասարար քաղաքականության դեպքում մի շարք առաջավոր բանվորներ, վորոնք կարող եյին աշխատանքի նշանակելիորեն ավելի շատ արտադրողականություն տալ և նշանակելիորեն ավելի շատ արտադրանք, հեռու յեր մնում աշխատանքի բարձր արտադրողականության համար մղվող պայքարից:

Յեվ մեր խնդիրը, կուսակցության խնդիրը, արհմիությունների խնդիրը, տնտեսավարների խնդիրն այն է, վոր մեր ձեռնարկություններում շուտ դեն գցենք աշխատանքի նորմավորման ու տարիֆիկացիայի սխալ մեթոդները,

դրանք փոխարինենք այնպիսի ձևերով ու մեթոդներով, վորոնք խթանեյին աշխատանքի արտադրողականության աճումը:

Յեվ կամ վերցնենք մեր այն ինստիտուտների, լաբորատորիաների աշխատանքը, վորոնք զբաղվում են տեխնիկական նորմաների հարցերով: Պետք է ուղղակի ասել, վոր նրանք ծայրահեղորեն հետ են մնացել և միայն հիմա յեն սկսում, այն էլ շատ դանդաղորեն, հարմարվել այս ստախանովյան շարժմանը: Իսկ ո՞ւր եյին մինչև հիմա մեր լաբորանտները, հետազոտողները: Ինչո՞ւ նրանք մինչև այժմ չեն սահմանել, թե ինչ կարող է տալ մեզ մեր ձեռնարկություններում յեղած նոր տեխնիկան: Դուրս է գալիս, վոր այստեղ էլ մեր պրակտիկներն աշխատանքի նորմավորման ասպարեզում ուղղել են մեր վայ-թեորետիկներին: Պրակտիկները—բանվորներն իրենց անձնվեր աշխատանքով ուղղում են թեորիական սխալ նորմաները: Լաբորանտները, հաշվիչները, նորմավորողներն իրենց հաշվարկություններում հաշվի չեն առել մի հանգամանք—հաղթանակած պրոլետարիատի ուժն ու զորությունը, բարձր նորմաների համար պայքարելու պատրաստ առաջավոր բանվորների ուժն ու զորությունը:

Հարկավոր է ի հայտ բերել և մինչև վերջ մերկացնել ցածր նորմաների իդեոլոգիան ու պրակտիկան, սահմանների թեորիան և այլն: Այս տարվա կեսերին կուսակցության Կենտկոմի ղեկավարությամբ, տրանսպորտի յերկաթյա ժողկոմ Լազար Մոիսեյեվիչ Կագանովիչի ղեկավարությամբ մերկացվեցին մի խումբ մարդիկ, վորոնք քարոզում եյին սահմանի թեորիան տրանսպորտում: Այս թեորիան մերկացված է և մերկացված է մեր արդյունաբերության բոլոր ճյուղերում: Այս բանը պետք է անել նաև մեր ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ: Այստեղ մենք պետք է ունենանք մի թեորիա—բոլշևիկյան թեորիա, հիմ-

նված ստախանովյան շարժման պրակտիկայի վրա։ Հարկավոր է գործն այնպես դնել, որ մեր գիտական ինստիտուտներն ու լաբորատորիաները և այս գործով զբաղվող բոլոր որդաններն իրենց աշխատանքի մեջ յելակետ ունենան ոչ թե հին սահմանային նորմաները, այլ առաջնորդվեն ամենաառաջավոր, ամենակենսունակ նորմաներով, որոնք բղխում են այսորվա կոնկրետ պայմաններից։

Մեզ մոտ, Լենինգրադում շարժում է սկսվել հոգուտ նոր կապիտալ ներդրումներն ըստ ձեռնարկությունների վերանայելու, հոգուտ նոր սարքավորման հաշվարկումները վերանայելու, հոգուտ բանվորական ուժի քանակը վերանայելու։ Ցեվ կան արդեն առաջավոր դիրեկտորներ, որոնք Լենինգրադի ստախանովականների հավաքին հայտարարել են, որ նրանք մեծ քանակով կապիտալ ներդրումներ չեն պահանջում, որ նրանք լրացուցիչ քանակով դաղդյահներ չեն պահանջում, լրացուցիչ քանակով բանվորներ չեն պահանջում և միևնույն ժամանակ հանձն են առնում լիովին կատարելու 1936 թվի ծրագիրը, հանձն են առնում հնգամյակը կատարելու չորս տարում։ Որ որի վրա աճում է այսպիսի դիրեկտորների թիվը, և սա ցույց է տալիս, որ մեզ մոտ արդյունաբերության մեջ կան բավականաչափ բոլշևիկ հրամանատարներ, որոնք կկարողանան գլխավորել ու կազմակերպել ստախանովյան շարժումը և հասնել հնգամյա պլանը չորս տարում կատարելուն։ (Ծափահարություն)։

Ստախանովյան շարժումը նորանոր խնդիրներ է դնում նաև սոցիալիստական կուլտուրայի հետագա զարգացման առաջարեղում, որպեսզի լրիվ բավարարություն տրվի բանվոր դասակարգի աճած պահանջմունքներին։ Այստեղ, խորհրդակցության մեջ խոսում էին այն մասին, որ պատեֆոնները քիչ են, ռադիոընդունիչները, յերաժշտական գործիքները քիչ են և այլն։ Սրանք ճիշտ կլատամբանքներ

են։ Այս տեսակետից Լենինգրադն իր համար մի ամբողջ շարք յեղրակացություններ պիտի անի, որովհետև յերաժշտական գործիքների, ռադիոընդունիչների և ուրիշ այսպես կոչված կուլտուրական ապրանքների արտադրության տեսակետից նա վերջին տեղը չի բռնում Խորհրդային Միության մեջ։ Ցեվ իբրև ստախանովյան շարժմանը տրված պատասխաններից մեկը մենք, լենինգրադցիներս, պետք է ծավալենք կուլտուրական ապրանքների արդյունաբերությունը։ (Ծափահարություն)։

Ստախանովյան շարժումը չի կարող նոր բարձր պահանջներ չհարուցել նաև արհմիությունների, Լուսժողկոմատի, Առժողկոմատի և այլոց կուլտուրական աշխատանքի բուն կազմակերպման հանդեպ։ Մեզ մոտ ժողովրդական լուսավորության որդանները, արհմիություններն ու առողջապահական որդանները շատ հետամնաց են և այս կազմակերպությունների ու հիմնարկների նույնիսկ ղեկավար աշխատողները դեռ պատշաճ ուշադրություն չեն դարձնում դեպի կենդանի մարդիկ, պատշաճ հոգս չեն ցուցաբերում նրանց վերաբերմամբ։ Կուսակցական և արհեստակցական կազմակերպությունները պետք է ամենակարճ ժամանակամիջոցում վերացնեն այս հետամնացությունը և իրենց ուշադրության կենտրոն դարձնեն առաջավոր բանվորների նյութական և կուլտուրական սպասարկման հոգը։

Մեր կուսակցական կազմակերպությունները պետք է է՛լ ավելի շատ զբաղվեն մեր կադրերի քաղաքական դաստիարակությամբ։ Հարկավոր է ավելի լայն ծավալել մասսայական աշխատանքը բանվորների, կոլտնտեսականների մեջ, ավելի խորը կերպով հասցնել մասսաների գիտակցությանը Մարքսի–Ենգելսի–Լենինի–Ստալինի դաղափարները, է՛լ ավելի ամուր կապվել մասսաների հետ։ Հանձին Ստախանովի, Բուսիգինի և ուրիշ ստախանովական ընկերների մենք ունենք իսկական վոչ կուսակցական բոլշևիկներ, մեր

կուսակցության ռեզերվներ։ Եվ յերբ ընդունելություն տվվի կուսակցության մեջ, ապա բանվոր դասակարգի մի շարք լավագույն մարդիկ, վորոնք աճել են այս ժամանակամիջոցում, անշուշտ կկանգնեն մեր դարձի համար մարտընչողների առաջին շարքերը, կմտնեն բոլշևիկյան կուսակցության մեջ։ (Ծափահարություն)։

Ընկեր Ստալինը կարմիր բանակի ակադեմիկոսների մոտ ճառելիս ասաց, վոր այժմ մեզ անհրաժեշտ է վերացնել կադրերի սովը։ Կադրերի պակասությունը ներկայումս ամենամեծ դժվարությունն է, վորովհետև մենք ունենք առաջնակարգ տեխնիկա, իսկ կադրերը դեռ պետք է դաստիարակել, վորպեսզի նրանք կարողանան այս տեխնիկան թամբել և ոգտագործել ամբողջությամբ։

Բայց, ընկերնե՛ր, արդեն 1935 թիվն է, և ահա այս իսկ խորհրդակցությունը ցույց է տալիս, վոր առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինի դրած կադրերի սովի վերացման խնդիրը—ամենակարևոր և իր նշանակությամբ ամենահրատապ կուսակցական ու պետական խնդիրը—կկատարվի։

Եվ, ընկերնե՛ր, յես կարծում եմ, վոր մեր պատասխանն առաջնորդի ցուցումին կլինի այնպիսի աշխատանքն իր վրա, այնպիսի աշխատանքը կադրերի դաստիարակման ու աճեցման գործում, վոր մենք կադրերի տեսակետից չուտով կհասնենք ունևոր կյանքի։

Թանկագին Ստալինին պատասխանենք, ընկերներ, մոտ ժամանակներս մարդկանց ե՛լ ավելի ուժգին աճումով, հաղթանակած սոցիալիզմի կադրերի ել՛ ավելի ուժգին աճումով։

Կեցցե՛ն ստախանովականները — մեր կուսակցության բարեկամներն ու ոգնականները։

Կեցցե՛ մեզ վոգեշնչող, մեր զորավար, մեր սիրելի ընկեր Ստալինը։

ՀԱՅԿՈՄԿՈՒՍ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿ-ՍՍՌ
Մոսկվա

Կեցցե՛ պայքարը նորանոր հաջողությունների համար։

Կեցցե՛ պայքարը սոցիալիզմի արտադրողական ուժերի լրիվ ոգտագործման համար։ Թող աճեն, ամրանան ու ծաղկեն սոցիալիզմի կադրերը։

(Փոթորկալից ծափահարություն։ Խորհրդակցության մասնակիցներն ովացիա յեն սարքում ընկ. Ժդանովին։ Լսվում են՝ «կեցցե կուսակցության կենտկոմի բարտուղար ընկեր Ժդանովը», «ուռա» բացականչություններ)։

ՀԱՅԿՈՄԿՈՒՍ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿ-ՍՍՌ
Մոսկվա

4092

«Ազգային գրադարան»
NL0204065

28

ԳԻՆԸ 20 կ. ЦЕНА 20 к.

А. А. ЖДАНОВ

СТАХАНОВЦЫ НАСТОЯЩИЕ БОЛЬШЕВИКИ ПРОИЗВОДСТВА

Армвартпедгиз, Эривань